

«ԲՆԱԿԱՎԱՅՐ, ՏՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՌԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐԸ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԲՆԱԳՐՈՒՄ

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ* 
Երևանի պետական համալսարան

Լեզվական հասկացութաբանությունը արդի ինքնություն գիտակարգ է, որը ուսումնասիրում է լեզվական երկպալան միավորների, մասնավորապես՝ բառերի բովանդակային յուրահատկությունները, ընդ որում արտահայտության և բովանդակության նշյալ պլանները կարող են շատ լայն ըմբռնումներ ունենալ, այսինքն՝ բառը կարող է քննվել և՛ որպես գաղափարական խորհրդանիշ, և՛ որպես համընդհանուր առարկայական գաղտնագիր (կոդ), և՛ որպես բառաբերականական դաշտ: Հասկացությունների բառային նշանակումները յուրաքանչյուր լեզվում արտահայտում են տվյալ լեզվի կրող հանրության մտածողության և աշխարհընկալման, մշակույթի ազգային յուրահատկությունները, որոնք տարբեր ժամանակներում կարող են կրել առանձին փոփոխություններ, սակայն բնորոշվում են ընդհանրական կայունությամբ: Այս հոդվածում քննվել են Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկի գրաբար բնագրում «բնակավայր, տուն» հասկացության լեզվական տարբեր նշանակումները՝ առանձնացնելով դրանց բնիկ միավորները իրենց իմաստային բովանդակությամբ՝ հին հայերենից մինչև արդի արևելահայերեն: Առանձնացվել է հնդեվրոպական ծագման շուրջ 55 բառ, որոնք այս կամ այն ծավալով արտահայտում են «բնակավայր, տուն» հասկացության ընկալումները հին հայերենում, անդրադարձ է արվել դրանց իմաստային և բառակազմական բնութագրին, հնչյունական պատկերին: Այս հասկացության բառային միավորները հիմնական բառաֆոնդին են պատկանում, կիրառման մեծ հաճախականություն ունեն: Հետազոտության մեջ ընդգրկվել են թե՛ հասարակ, թե՛ հատուկ անուններ:

Բանալի բառեր – «Բնակավայր/տուն» հասկացությ, բնիկ բառեր, Մովսես Խորենացի, «Պատմութիւն Հայոց», դասական գրաբար, արդի արևելահայերեն, իմաստային տեղաշարժեր, բառակազմություն

* **Նարինե Դիլբարյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ

Нарине Дилбарян – кандидат филологических наук, доцент кафедры истории армянского языка и общего языкознания ЕГУ

Narine Dilbaryan – Candidate of Philological Sciences, Associate Professor at YSU Chair of History of the Armenian Language and General Linguistics

Էլ. փոստ՝ narine.dilbaryan@ysu.am <https://orcid.org/0000-0003-1212-0029>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 13.11.2024

Գրախոսվել է՝ 03.03.2025

Հաստատվել է՝ 07.03.2025

© The Author(s) 2025

Լեզվաբանական հասկացութաբանությունը արդի միջգիտակարգային բնագավառ է, որը 21-րդ դարի սկզբից արդեն զարգացման նոր հեռանկարներ է նախանշում՝ միավորելով լեզվաբանությունը տրամաբանության, փիլիսոփայության և մշակութաբանության հետ: «Հասկացույթ» եզրույթի ամբողջական սահմանում է առաջարկում Ս. Գ. Վորկաչովն իր հոդվածներից մեկում, որի վերնագիրն արդեն խոսում է՝ «Հասկացույթն իբրև «հովանոցային եզրույթ»»¹: «Հովանոցային» կոչվող եզրույթներն իրենց հովանու ներքո ամբողջացնում են մի քանի գիտական ոլորտների առարկայական միավորները, ամենից առաջ՝ ճանաչողական հոգեբանության և ճանաչողական լեզվաբանության, որոնք ուսումնասիրում են մտածողության և լեզվաբանության հիմնախնդիրները տեղեկատվության մշակման և պահպանման առումներով, ինչպես նաև դրանց մշակութաբանական դրսևորումները: Լեզվաբանական քննության հիմնական նպատակը տվյալ հասկացույթի անվանաբանական արժեքի բացահայտումն է՝ իր պարունակած բովանդակության բոլոր անվանումներով հանդերձ: Ըստ այդմ՝ հասկացույթը հավաքական գիտելիքի կամ գիտակցության բարձրագույն հոգևոր արժեքների լեզվական արտահայտությունն է, որը բնութագրվում է մշակութային առանձնահատկություններով, իսկ նման հավաքականության դերում, որպես կանոն, հանդես է գալիս ազգը՝ իր լեզվակիրներով հանդերձ²: Այսինքն՝ տարբեր հասկացույթների ուսումնասիրությունը ազգային առանձին լեզուներում՝ իրենց բոլոր նշանակումներով, թույլ է տալիս վեր հանել տվյալ ազգի մտածողության և աշխարհաճանաչողության բնութագրիչները, նրանց ինքնության բաղադրիչները:

Այս հոդվածում քննել ենք «բնակավայր, տուն» միացյալ հասկացույթի բառային տարբեր նշանակումները՝ ներառյալ բառակապակցությունները, դարձվածային միավորները, հատուկ և հասարակ անվանումները Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» գրքում, որը համարվում է հայերի ազգաբանության և պետականության պատմության առաջնային սկզբնաղբյուր: «Բնակավայր, տուն» միացյալ հասկացույթը յուրաքանչյուր լեզվի բառապաշարի միջուկային միավորներից է, որն ունի հարուստ իմաստային դաշտ, հոմանշային հարուստ շարքեր կազմող բազմաթիվ մասնավոր բառային նշանակումներ: Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկից դուրս ենք բերել և քննել ենք այս հասկացույթի բնիկ անվանումները՝ ցույց տալով դրանց իմաստաբանական զարգացումը հնդեվրոպական նախալեզվից մինչև հին հայերեն, ապա արդի արևելահայերեն՝ փորձելով վեր հանել հին հայերի ընկալումները իրենց բնակավայրի, տան վերաբերյալ, դրանց աստիճանակար-

¹ St'u Семинар "Проблемы лингвоконцептологии" (xn--b1abhjmcprdhbn0bzc.xn--p1ai) կայքում, որը կրում է «Լեզվահասկացութաբանության հիմնախնդիրներ» խորագիրը և ամփոփում է լեզվահասկացութաբանությանը վերաբերող հոդվածներ, թեզեր և մենագրություններ՝ 2001-2023 թթ.:

² St'u հիշյալ կայքը, **Воркачев С. Г.** Концепт как «зонтиковый термин» // Язык, сознание, коммуникация. Вып. 24. - М., 2003, էջ 5-12:

գությունը, իմաստակիրառական, ոճական նրբերանգները:

Լինելով 5-րդ դարի հայ պատմագրության ամենահեղինակավոր սկզբնաղբյուրներից մեկը՝ «Պատմութիւն Հայոցը» հարուստ նյութ է հաղորդում հայ ժողովրդի ծննդաբանության, անցած ճանապարհի, վերելքների և անկումների մասին, այսինքն՝ հայոց հայրենիքի մեծ և փոքր տների, բնակավայրերի մասին: Այս մատենագիտական երկը լեզվաբանական հետազոտությունների հարուստ սկզբնաղբյուր է: Մենք առանձնացրել ենք նշյալ բառերի հոմանշային շարքերը, հնչյունափոխական տարբերակները, դրանցով կազմված դարձվածքային միավորները, վեր հանել 5-րդ դարի գրաբարի կենսունակ բառակազմական կաղապարները, ածանցումներն ու բառաբարդումները տվյալ հասկացության բազմաշերտ միավորների տեսանկյունից:

Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկում *բնակավայր, տուն* նշանակող բառերի հիմնաշերտը բաղկացած է բնիկ կամ հնդեվրոպական ծագման բառերից: Դուրս բերված բառերից շուրջ 55-ը բնիկ են՝ **երկիր, տեղի, տուն, տանիք, հայրենիք, ձմերոց, դադարք, դուռն, կողմն, կողմնակալութիւն, աջակողմն, ձախակողմն, ամուրն, ամրոց, վերնատուն, առագաստ, հովանոց, այր (քարայր), օթանոց, աղբատանոց, եղբայրանոց, ամրութիւն, կալուածք, ընտանիք, եզր, գետեզր, արեւելք, արեւմուտք, ծով, ծովեզերայք, լեռն, լեռնակողմն, միջոց, բլուր, ձոր, անձաւ, քարանձաւ, երկին/երկինք, մաւր/մօր, հարաւ, հարաւակողմն, հիւսիսի, նաւ, նաւահանգիստ, նաւակառոյց, գաւառ, գիւղ/գեւղ, կղզի, ցամաք, սենեակ, տէրութիւն, տիեզերք, տանուտէրութիւն, գաւտի/գօտի, ածու** ևն:

Հիշյալ շարքում կենտրոնական է **տուն** բառը, որը առաջ է եկել ***dem-, *dem(o)-** «կառուցել, իրար հարմարեցնել» արմատից³: Այս ձևը հայերենում չի պահպանվել, սակայն Հր. Աճառյանը բերում է հունարենի **δέμω**, գոթերենի **timrjan**, գերմաներենի **zimmern** ձևերը, որոնք նրա ժառանգներն են, իսկ «այս հնիւ. **dem-, demā-** «շինել, կառուցել» արմատն էլ համարւում է աճած՝ պարզական **dē** - «կապել» արմատից, որի ժառանգն է հյ. **տի** «կապը»⁴: Չուգահեռ նշում է, որ հայերեն **տուն** բառն առաջացել է հնիւ. **dōm** ձևից, իսկ **domu-** ձևը պահպանվել է **տանուտէր** բառի մեջ:

Երկում առկա են **տուն** բառով բաղադրյալ ուշագրավ կառույցներ՝ **տուն Թորգոմայ, տուն Տեանն**: **Թորգոմ** անձնանվան ծագումը կապվում է եբրայական **Thogarmā** անվան հետ (այս անունն էր կրում Նոյի զավակ Հաբեթի որդի Գամերի երրորդ որդին), որն ունի նաև **Thorgamā** տարբերակը: Վերջինից էլ հունարեն տառադարձված է **Θοργαμά, Θεργαμά, Θοργομά**, որտեղից էլ առաջ է եկել հայերեն **Թորգոմա** ձևը⁵: Սուրբ Գրքի մեկնիչները «տուն Թորգոմայ» ասելով հասկացել են Հայքը՝ Հայաստանը: «Տուն Տեանն» (Տիրոջ՝ Աստծո տուն,

³ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 735:

⁴ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1 (այսուհետ՝ ՇԱԲ), Եր., 1926, էջ 428:

⁵ Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Եր., 1942, էջ 343:

եկեղեցի) կապակցության երկրորդ բաղադրիչը՝ *Skuan*, *տէր* բառի սեռական հոլովածն է. վերջինս կազմված է **տի** «մեծ» և **այր** «տղամարդ, այր, մարդ» բաղադրիչներից: *Տի* և *այր* բառերի ծագումը բնիկ հնդեվրոպական է, առաջինը՝ ***dī-to-**՝ ***dā(i)-** «բաժանել» արմատից⁶, երկրորդի բուն նախածնը, Գ. Զահուկյանի կարծիքով, դժվար վերականգնելի է⁷: Ենթադրվում է, որ հնդեվրոպական ***anrio-** ձևից է ծագել, որը հնչյունափոխվել է ***ario-** «տեր» հիմքի ազդեցությամբ, սեռ. *անն* < ***anros**, տր. *անն* ***anrai-**: Պատմության մեջ վկայված է նաև **տուն** և **տէր** արմատներով **տանտուտէրութիւն** բառը:

Ունենք նաև **վերնաստուն** կազմությունը: Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» **վերնաստուն** բառի իմաստը տրվում է. *1. տան վերնի հարկը, վերնահարկ: 2. (եկեղ.)*: *Եկեղեցիներում՝ դռան վերնը շինված հարկը՝ կանանց համար: 3. (պատմ.)*: *Կուռքերի բարձրադիր մեհյան*⁸: Նշյալ բոլոր իմաստները ժառանգել ենք գրաբարից: **Վեր** արմատը ծագել է ***uper** «վեր, վրա» արմատից, իսկ **-ին** վերջածանցը ծագում է հնդեվրոպական ***-no-**, ***-eno-** ածանցներից, մասամբ նաև ***-ino-** տարբերակից: Մովսես Խորենացու պատմության մեջ վերնաստուն բառն արտահայտում է հիմնականում «տան բարձրադիր մասը» իմաստը, երբեմն նաև ունի կրոնական իմաստ՝ «բարձրադիր մեհյան»:

Բնակավայր, տուն իմաստային դաշտի **տանիք** բառը «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» գրքում (այսուհետ՝ ՆԷԲ) հետաքրքիր կերպ է բացատրված. «Տեղի տափարակ կամ ձեմելիք ի վերայ տան»⁹: Ստ. Մալխասյանցի և Էդ. Աղայանի բացատրական բառարաններում տրվում է *շինության վրայի ծածկը, վերին տափակ երեսը* բացատրությունը: Բառի հիմքում ընկած է *տուն* արմատը, որը սեռական հոլովածնով է հանդես գալիս՝ **տան**, իսկ **-իք** վերջավորությունը **-ի** ածանցի և **-ք** հոգնակերտի միությունն է. դարձյալ բնիկ է: *Տանիք* հիմքով առկա է նաև **ընտանիք** բառը՝ *տուն* նշանակությամբ:

Մեզ հետաքրքրող հասկացության կենտրոնական բառերից է նաև **երկիր**-ը: Ծագումը կապվում է հնդեվրոպական ***erdu-**, ***er-** (***er-t-**, ***er-u-**) «երկիր» արմատի հետ: Հր. Աճառյանը բերում է նաև Հովհաննես Երզնկացու մեկնությունը, որը շատ յուրօրինակ բացատրություն է տալիս իր ստուգաբանությանը՝ **երկու իր** կամ **երկու կրող**. «Երկու իր՝ հող և ջուր: Ասի երկիր վասն 4 պատճառաց. նախ զի երկու երկնիցս ծայր ունի. երկայն զարեւելս եւ զարեւմուտս եւ երկու ի լայն՝ զհիւսիս եւ զհարաւ»: Հովհաննես Երզնկացիի պատկերավոր ներկայացրել է այս հասկացության հնագույն տրամաբանական ընկալումը, ըստ որի՝ երկիրը գոյանում է համատարած ջրից և հողից, գոյանում, ապա մեռնում և պարտակվում դարձյալ հողի ու ջրի մեջ¹⁰: Խորենացու երկում

⁶ Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 728:

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 49:

⁸ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 1384:

⁹ Հայր Գաբրիել Աւետիքեան, Հայր Խաչատուր Միսրմէլեան, Հայր Մկրտիչ Աւգերեան // Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Եր., 1979, էջ 843:

¹⁰ Տե՛ս Հր. Աճառյան, Հ, հ. 1, էջ 63:

վկայված են նաև *երկիր* բառով կազմված բաղադրյալ կառույցներ, որոնք տեղանվանական արժեք ունեն, այդպիսիք են՝ **երկիր Արարադայ, երկիր Աւետեաց, երկիր Խաղտեաց, երկիր Խուժաստանի, երկիր Հայոց, երկիր Յունաց, երկիր Պարսից, երկիր Քուշանաց** ևն: Սրանք արդեն հատուկ անուններ են՝ տեղանուններ: Փաստացի **երկիր** բառը, բացի «հող» իմաստն արտահայտող հասարակ գոյական լինելուց, նաև եզրույթ է, որն արտահայտում է վարչատարածքային բաժանում իմաստը՝ *երկրամաս*, այն ժողովրդանունների հետ դառնում է հատուկ անվանում՝ տեղանուն-երկրանուն: Այս նույն կաղապարով *աշխարհ* փոխառյալ բառն է տեղանուններ կերտում:

Երկիր Արարադայ և *երկիր Հայոց* կապակցությունները *Հայոց աշխարհ*-ի հոմանիշն են, հայերի բնակության վայրը, պետությունը: **Արարադ**-ը հայոց միջնաշխարհի անվանումն է՝ սկզբնապես այն համարում էին նախահայկական՝ խաղիական **Urartu** ձևից ծագող¹¹: Ակնհայտ է **Արար** արմատի կապը **առնել** բայի հետ, որի կատարյալի հիմքն է արմատի կրկնությամբ կազմված **արար**-ը, իսկ բայն արտահայտում է գործողություն կատարելու իմաստային ողջ դաշտը հայերենում՝ պարզ անելուց մինչև արարում, ստեղծում և կերտում: **Հայ / Հայք / Հայոց** ժողովրդանվան ծագման վերաբերյալ կան միմյանցից բավական տարբեր մի շարք վարկածներ, սակայն մենք հիմք ենք ընդունում ամենալայն տարածում ունեցող մեկնությունը, որը միավորում է **հայ** արմատը և **Հայք**, ապա **Հայկ** հատուկ անունները: *Հայք* ձևը «Բառգիրք Հայոց»-ում նշանակում է «հսկայք», իսկ *Հայկ*-ը՝ «փոքր»¹², թերևս ելնելով *Հայ+իկ>Հայկ* բառակազմական կաղապարից, որտեղ *-իկ*-ը դիտարկվել է որպես նվազական-փաղաքշական ածանց:

Երկիր Աւետեաց. Պաղեստինն է՝ այն երկիրը, որն Աստված խոստացել էր ժառանգություն տալ հրեաներին: Նշանակում է նաև «դրախտային, կատարյալ երկիր»: Հիմքում **Աւետիք** կամ **Աւետիս**՝ «բարի լուր» բառն է, որը վերածվել է արական անձնանվան: Ծագում է հնդեվրոպական ***aued-**՝ ***aueid-** «խոսել» արմատից¹³:

Խաղտիք երկրանվան ծագումը, ըստ Հր. Աճառյանի, **խաղտ** «կոշտ, կոպիտ» նշանակող բառի հետ է կապված, որտեղից էլ *երկիր Խաղտեաց*, այսինքն՝ **Խաղտիք** երկիրը, **խաղտիք** ցեղի բնակավայրը¹⁴: Գ. Ջահուկյանի մեկնաբանությամբ **խաղճ** բառի հետ այն ծագում է հնդեվրոպական ***kal-** «կարծր, կոշտ» արմատից՝ **k/kh** անցմամբ՝ ***khal-d>** խաղտ. հմմտ. *խաղճախուղճ* և *խաղտախուղտ* կրկնավորները¹⁵:

Երկիր Խուժաստանի. Պարսկաստանի գավառներից մեկի անվանումն է՝

¹¹ Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, էջ 269:

¹² Տե՛ս Բառգիրք Հայոց, Եր., 1975, էջ 179:

¹³ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 101:

¹⁴ Տե՛ս Հր. Աճառյան, ՀԱԲ, էջ 323:

¹⁵ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 313:

Խուժաստան, որի հիմքում **խուժ** բառն է «վայրենի, բարբարոս, խուժան»: Իրանական ծագման բառ է՝ **xuz**, որից էլ՝ **Xuzistan**, այս ժողովուրդը վայրենու համբավ ուներ: Երկում հանդիպել ենք նաև *երկիր* բառով կազմված դարձվածքների, որոնց կանդրադառնանք համապատասխան ենթազվիտում:

Իբրև բնական ամուր տեղ, պնդոց՝ *բնակավայր, տուն* նշանակող բառերի շարքում ընդգրկել ենք նաև **ամուրն**, **ամրոց** և **ամրութիւն** բառերը, որոնք հոմանշային շարք են կազմում:

Բառարաններում **ամուրն** բառի երկու իմաստ է տրվում՝ մի դեպքում իբրև ածական, մյուս դեպքում՝ գոյական: Մեզ հետաքրքրում է գոյականական իմաստը՝ թեև ածականական իմաստը՝ *պինդ, ուժեղ, զորեղ, հաստատուն*, անմիջապես կապվում է գոյականականին՝ *ամրոց, բերդ*, այսինքն՝ *ամուր տեղ, ամրություն*: Ծագում է հնդեվրոպական ***moi-ro-** «փայտի կառույց» նախաձևից, ***mei** «ամրացնել» արմատից ձայնավորի անբացատրելի փոփոխությամբ և ա-ի հավելմամբ¹⁶: **-ng** և **-ութիւն** վերջածանցները ևս հնդեվրոպական ծագում ունեն: *-ng* մասնիկը ծագել է ***-sko-/-ā-** ածանցից՝ նախորդող հիմքային ***-ū-** ձայնավորով¹⁷: Տեղ ցույց տալու իմաստը, ըստ Գ. Ջահուկյանի, զարգացել է հայերենում: **-ութիւն** վերջածանցի ծագման վերաբերյալ երկու վարկած կա: Այն մի կողմից կապվում է հնդեվրոպական ***-tion** ածանցի հետ, մյուս կողմից՝ **-ոյթ** **նիւն** ածանցների: «Առաջին դեպքում պետք է ենթադրել ***-tion**-ից առաջ սկզբնական ***eu/ou** երկրաբար, որից հետո ***t-ն** յ-ի չի փոխվում (**-ոյթ<*eu-ti-/-ou-ti-**), կամ կարծել, որ ***ter>յր** փոփոխության կողքին եղել է ***ti->թ** փոփոխություն»¹⁸: Գ. Ջահուկյանն ավելի հավանական է համարում վերջին վարկածը:

Տերութիւն. թագավորի իշխանությանը ենթակա թագավորություն է, երկիր: Հիմքում **տէր** արմատն է՝ **-ութիւն** վերջածանցի միացմամբ:

Էդ. Աղայանի բացատրական բառարանում **կողմն** բառի համար շուրջ 17 իմաստ է բերվում: Մեզ հետաքրքրում է մասնավորապես նրա 11-րդ՝ *որոշ ուղղությամբ ընկած բնակավայր, երկիր, զավառ* իմաստը: Բերենք բնագրից մի օրինակ. «...որ և բնակեցաւ ի նորին ժառանգութեան ի կողմանս Տարօնոյ և Հաշտենից»¹⁹: Ծագում է **կող** արմատից՝ **-մն** վերջածանցով: *Կող* բառի ծագումը կապվում է հնդեվրոպական ***gol-** «ճյուղ» արմատի հետ, որից նաև առաջ է եկել հայերենի *կողր* «ճյուղ» բառը: Հր. Աճառյանը ցեղակիցներից բերում է թիսարական **kalyami** ձևը: **-մն** վերջածանցը ծագում է հնդեվրոպական ***-men-/-mn-** ածանցից:

Կողմն բառը երկում լայն կիրառություն ունի: Այստեղ վկայված են **կողմն հիւսիսոյ, կողմն հարաւոյ, կողմն արեւմտեայ, կողմն արեւելեայ** կապակցությունները: Բառերը ևս ընդգրկել ենք *բնակավայր, տուն* հասկացույթի դաշ-

¹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 46:

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 810:

¹⁸ Նույն տեղում, էջ 811:

¹⁹ **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Ոսանոդի գրադարան, Եր., 1981, էջ 356: Այսուհետև այս բնագրի էջերը կնշենք մեջբերման կողքը:

տում: Էդ. Աղայանի բառարանում **հյուսիս** բառի համար նաև նշվում է մեզ հետաքրքրող հետևյալ բացատրությունը՝ *այն երկրները, որոնք ընկնում են հյուսիսի կողմերը: Հիւսիս, հարաւ, արեւմուտք, արեւելք* հասկացությունները աշխարհի չորս ծագերն են, որտեղ տեղակայված են հազարավոր մարդկանց բնակության վայրերը: Բերենք բնագրային մի քանի օրինակներ. «*Չու արարեալ գնայ յերկիրն Արարադայ, որ է ի կողմանս հիւսիսոյ*» (Էջ 45), «*զամենայն արեւելեան և զհիւսիսային և զհարաւային կողմանս քաղաքին զարդարէ դաստակերտօք, և սաղարթիւք ծառոց վարսաւորաց*» (Էջ 66), «*եկեալ զազգն Ամատունեաց ի կողմանցն արեւելից Ասորեաց աշխարհին*» (Էջ 224): Խորենացու երկում հանդիպում ենք **հիւսիսի** տարբերակը, որը վաղնջական ձև է: Ծագում է հնդեվրոպական ***seuke, *kiio-** «հակառակ կողմում ընկած» արմատներից, այսինքն՝ նշանակել է «ի հակադրություն հարաւի»²⁰:

Հարաւ բառը ծագում է բնիկ հնդեվրոպական ***perə-uo-**՝ ***per-** «առաջ» արմատից, հմմտ. ավ. **paurva** «առաջին, հարավային» (հայ-իրանական զուգաբանությամբ)²¹: Երկում գտել ենք նաև **հարաւ** և **կողմն** արմատներով կազմված **հարաւակողմն** բառը:

Արեւելք և **արեւմուտք** բառերը՝ որպես *բնակավայր, տուն* իմաստի կրողներ, ցույց են տալիս բնակության վայր, տեղ, կողմ. «*Բնքն խաղայ այլով աղխին ընդ արեւմուտս հիւսիսոյ*» (Էջ 40), «*ապրեցուցանել զայլ մանկունս, և յարեւմուտս կոյս յուղարկել ի լեառնն*» (Էջ 28), «*շինէ... երկուս տունս, զմին յարեւելս կոյս, իսկ զմյոսն յարեւմուտս կոյս նորին տանն*» (Էջ 48): Հիմքում ընկած **արև** բառի դիմաց բառարաններում նշվում է *տե՛ս արեգ*, որը ծագում է հնդեվրոպական ***reu** «կարմիր > արև» արմատից²²: Ել արմատի նախաձևն է ***el-** և ***ele-/lā-, *el-ei-, *el-eu-** հիմքային տարբերակներով: **Մուտ** արմատը ծագում է ***mōd-** «հանդիպել, մոտենալ» արմատից: Գ. Ջահուկյանը հնարավոր է համարում նաև ***meug- *mug-** (>մոյծ, մուծ-) արմատի հետ բաղարկում²³: Հիշյալ բառերից կազմված կառույցներն են՝ **արեւմտից հարաւոյ, արեւմտից հիւսիսոյ, արեւելեան հիւսիսի, արեւմուտք հարաւոյ, արեւմուտք հիւսիսոյ, հարաւ-արեւելք**: Այս նշանակումները վկայում են, որ հին հայերը աշխարհագրական և տարածական խորքային գիտելիքներ են ունեցել, կարողացել են հստակ տեղորոշել իրենց շարժումն ու ընթացքը, ինչպես նաև՝ տեղակայման վայրերը:

Աջ, ձախ և **կողմն** արմատներով պատմության մեջ առկա են **աջակողմն** և **ձախակողմն** միավորները: **Աջ** բառը ծագում է հնիւ. **sədhyo-** կամ **sādhyo** «ուղիղ» ձևից²⁴: **Ձախ** բառի ծագումը Հր. Աճառյանին անծանոթ է, իսկ Գ. Ջահուկյանի բացատրությամբ՝ եթե ***l>ղ>խ** անցման դեպքեր եղել են նաև 9-րդ

²⁰ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 462:

²¹ Տե՛ս նույն տեղը, էջ 450:

²² Տե՛ս նույն տեղը, էջ 89:

²³ Տե՛ս նույն տեղը, էջ 210 և 540:

²⁴ Տե՛ս Հր. Աճառյան, ՀԱԲ, էջ 246:

դարից առաջ, ապա այն բնիկ հնդեվրոպական բառ է՝ **g'huel-* «ծովել, գլխավոր ուղղությունից շեղվել» արմատից²⁵:

Լայն կիրառություն ունեցող *բնակավայր* հասկացության միավորների շարքում առանձնացրել ենք **տեղի** բառը, որի հնագույն ձևն է **տեղ**. պատմական զարգացման ընթացքում դրափոխության հետևանքով դարձել է *տեղ*: Ծագում է հնդեվրոպական **sed-lo-* ձևից, որ **sed-* «նստել» արմատի **lo-* վերջածանցով կազմությունն է²⁶:

Մեր իմաստային դաշտի թերևս ամենից կարևոր բառը **հայրենիքն** է, այն տարածքը, որը տվյալ ժողովրդի ծննդավայրն է, կյանքի և կեցության արմատը: Բառահիմքում **հայր** հնդեվրոպական **pater-*՝ **patros-* «հայր» արմատից ծագած միավորն է՝ **-ենի** (հավանաբար **-եան** և **-ի** ածանցների միացմամբ) և **ք** մասնիկի միասնությամբ²⁷:

Երկինք բառը, ընկալելով որպես Աստծո և հրեշտակների բնակության վայր, ևս ընդգրկել ենք *բնակավայր*, *տուն* իմաստային դաշտի մեջ: Վերջինիս ծագման վերաբերյալ Գ. Ջահուկյանը նշում է, որ այն ծագում է հնդեվրոպական **d(i)ui-n-*՝ **dei-* «փայլել, շողալ» արմատից՝ **-u* ածականով՝ «շողացող երկինք»²⁸: Էդ. Աղայանի ստուգաբանությամբ այն համարվում է ածանցավոր բառ՝ **երկ-** արմատով և **-ին** ածանցով: Արմատի նախնական իմաստն է «փայլել, լուսավորել»: «*Հայտնի է, որ հնիս. *dw հայերենում տալիս է բկ, ապա՝ է հավելվածով՝ երկ-*»: Էդ. Աղայանը **dw<բկ* փոփոխությունը բացատրում է հետևյալ շղթայով. նախ **w-**ն դարձել է **q (dw>dg)**: **dw>tg* կապակցության մեջ նախորդ խուլի առնմանման հետևանքով **g-**ն դարձել է **k**, ապա երկու պայթականներից առաջինը վերածվել է շփականի²⁹:

Դուռն բառը փոխաբերական իմաստով նշանակում է *տուն, շենք*: Դասական շրջանում արտահայտում էր նաև *արքունիք, թագավորական նստավայր, նախարարություն* իմաստները: Ծագում է հնդեվրոպական **dhur-*՝ **dhuer-* «դուռ» հիմքից³⁰: Խորենացու երկում ունենք **դուռն արքունի, արքունական դուռն, դուռն Երուսաղայ, դուռն քաղաքին, դուռն ամրոցին, դուռն տաճարին, դուռն արքունի** կապակցությունները: Դրանցից անդրադառնանք **Դուռն Երուսաղայ** կառույցին: *Դուռն Երուսաղայ* ասելով՝ հեղինակը նկատի ունի *Երվանդի տունը, նստավայրը*: **Երուսաղ** արական անձնանունը ծագում է պարսկական **arvand, aurva-, aurvant** «արագ, քաջ» բառից³¹: Տարածված անուն է եղել պարսից շրջանում:

²⁵ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 473:

²⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 726:

²⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 805:

²⁸ Նույն տեղում, էջ 227:

²⁹ Տե՛ս Էդ. Աղայան, Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Եր., 1974, էջ 65-66:

³⁰ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 204:

³¹ Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 1, Եր., 1942, էջ 145:

Որպես բնակավայր է ընկալվում նաև **կալուածք** բառը, որի հիմքում **կալ** «բռնել» արմատն է: Ծագել է ***guol-**՝ ***geu-** «ծռել, թեքել, կորանալ, կամար կազմել» արմատից, հմմտ. հուն. *έγγυαλιζω* «հանձնել, ընձեռել», լատ. *vola* «ձեռքի ավ»³²: **-ուած** վերջածանցը կազմված է **ու** հիմքակազմ տարրից և **-ած** վերջածանցից, որն էլ ծագում է **ած**-ել բայի արմատից: **Կողմն** և **կալ** արմատների միացմամբ գրաբարում գործում էր **կողմնակալութիւն** բառը՝ կուսակալություն իմաստով, այսինքն՝ կուսակալի իշխանություն:

«Հաճեալ ընդ **բլուրն** շինէ քաղաք յիւր անուն անուանեալ Արտաշատ» (Էջ 210): Բերված օրինակը փաստում է, որ **բլուր** տեղանիշ բառը ևս կիրառվել է որպես բնակության վայր: Ծագում է հնդեվրոպական ***bhlō-ro-**՝ ***bhel-** «փչել, ուռցնել, բխել» արմատից. հմմտ. կիմր. **bāl** «բարձունք, գագաթ»: Խորենացու պատմության մեջ ունենք նաև **Բլուր** բառի տեղանվանական կիրառության դեպք. «... առեալ զնա աշակերտացն՝ տարան ի զհւղն որ կոչի **Բլուր**» (Էջ 442), որն ապացուցում է, որ «բնակավայր, տուն» հասկացության բառային միավորները դյուրությամբ հասարակ անուններից վերածվում էին հատուկ անունների՝ տեղանունների:

Լեառն. Ծագում է հնդեվրոպական ***kleitr-no**՝ ***klei** «հենել, հակել, թեքել» արմատից³³: Երկում հանդիպել ենք **լեառն** և **կողմն** արմատների բառաբարդմամբ ստեղծված **լեռնակողմն/լեռնակողմանք** ձևերին. *լեռներին հարող տարածքներ* իմաստով: **Լեառն** բառով կապակցությունները ևս մեծաթիվ են՝ **լեառն Սիմ**, **լեռինն Նպատայ**, **լեռինն Մասեաց**, **լեառն հարաւոյ**, **լեռինս Կորդուաց**, **լեառն Սթին**, **լեառն Տաուրոս** ևն: Սրանք բոլորը բաղադրյալ հատուկ անուններ են՝ լեռնանուններ:

Հնդեվրոպական ***antrio-**՝ ***antrom-** «այր, քարայր» արմատից է ծագում հայերենի **այր** (քարայր) բառը: Քարայրները՝ իբրև բնակատեղի, ծառայել են հատկապես նախնադարյան մարդկանց, սակայն հետագայում ևս նրանք շարունակել են որպես բնական տուն-պատսպարան ծառայել մարդկանց:

Իբրև ջրային կենդանիների բնակավայր՝ **ծով** բառը ևս ներառել ենք մեր ուսումնասիրած հասկացության դաշտում: Հետաքրքիր է վերջինիս աստվածաշնչյան ընկալումը՝ որպես արևմուտք: Ծագում է ***gob-** «ծով» արմատից³⁴: Առանձնահատուկ ուշադրության է արժանի **ծովն ծիրանի** կապակցությունը: Հայկական դիցաբանության մեջ ամպրոպի, ռազմի, քաջության և հաղթանակի աստված Վահագնի ծննդի ժամանակ երկինքը նմանեցվում է *ծիրանագույն ծովի*, որի մեջ կարմիր եղեգն է բոցավառվում: Եղեգնյա փողի բոցերից և ցլքերից ծնվում է խարսյաշ, բոցամորուս պատանին: Այս ամենն ուղղակի կապվում է ստորջրյա հրաբխի ժայթքմանը, որի հետևանքով հրաբխային ծագման կղզիներ են ձևավորվում՝ որպես բնակավայրեր:

³² Տե՛ս **Գ. Զահուկյան**, նշվ. աշխ., էջ 373:

³³ Տե՛ս նույն տեղը, էջ 293:

³⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 366:

Գաւառ բառի ծագման վերաբերյալ երկու տարբեր մոտեցումներ կան: Հր. Աճառյանը այն համարում է փոխառյալ բառ կովկասյան կամ խաղյան ընտանիքից՝ բերելով վրացական **գվարի** «տեսակ, ցեղ, սեռ, ընտանիք», **գվարիանի** «ազնիւ ընտանիքից, ընտիր, ցեղընտիր» ձևերը³⁵: Գ. Ջահուկյանը արդարացիորեն առավել հիմնավոր է համարում բնիկ հնդեվրոպական ***ghau-** «տարածք» արմատից ծագումը, որն առնչվում է ***gheu-** «հորանջել, լայն բանալ, լայն բացվել» արմատի հետ: Ջուգահեռ առանձնացնում է հայ-գերմանական զուգաբանությունը (հմմտ. հ. վ. գ. **gawi** «երկիր, երկրամաս»)՝³⁶:

Երկում *գաւառ* բառով առկա են **գաւառն Աղիովտի, գաւառն Աշոցաց, գաւառն Բասենոյ, գաւառն Բուզնան, գաւառն Գողթան, գաւառն Դարանաղեաց, գաւառն Եկեղեաց, գաւառն Ծոփաց, գաւառն Կարնոյ, գաւառն Համշենից, գաւառն Մանանաղոյ, գաւառն Շաւարշան, գաւառն Շիրակայ, գաւառն Վանանդայ, գաւառն Միւնեաց, գաւառն Տաշրաց** ևն հատուկ անվան արժեք ունեցող կապակցությունները:

«Սահման, ափ, վերջ, ավարտ» իմաստով հաճախադեպ է **եզր** բառը. «*առ եզերք սահմանացն Բակտրիացոց ասէին բնակեալ սակաւ աւուրս*» (էջ 30), «*Արամայիս շինէ իւր տուն բնակութեան ի վերայ ոստոյ միոյ առ եզերք գետոյն*» (էջ 48): Ծագում է հնդեվրոպական ***eg'her(o)-** ***eg'h-** «եզր, սահման» արմատից, հմմտ. լատվ. **ezers**, հ.սլ. **ezero**³⁷:

Եզր արմատով կապակցություններից առանձնացրել ենք **եզր գետոյն, եզր ծովուն, եզր հայկական, եզր երկրի, եզր ծովակի, եզր փոսոյն, եզր դաշտին**: Առկա է նաև **գետ** և **եզր** արմատներով **գետեզր** բառը, որի *գետ* բաղադրիչը ևս բնիկ է՝ ***uedo-** ***au(e)-**, **-ed-**, **-er-** «խոնավացնել, հոսել» արմատից³⁸: **Ծով** և **եզր** արմատներով ունենք **ծովեզր** և **ծովեզերայք** միավորները, **տի** և **եզեր** արմատներից՝ **տիեզերք** բառը: Խորհրդանշական է **Եզր հայկական** կապակցությունը՝ որպէս **Հայքի** հոմանիշ: **Հայկական** բաղադրիչի կազմում ունենք **Հայկ անվանումը**, որը ծագում է **Հայկ** ժողովրդանունից³⁹, և **-ական** մասնիկը, որը իրանական ծագման է՝ **-(a)kan** ածանցից:

Մեր իմաստային դաշտի սակավ կիրառություն ունեցող բառերի շարքում կարող ենք ընդգրկել **դադարք, անձաւ, քարանձաւ, աղքատանոց, եղբայրանոց, օթանոց, հովանոց, ձմերոց, առագաստ, մօր, այգի, նաւ, նաւահանգիստ, նաւակառոյց, միջոց, հարկ, ընտանիք** միավորները:

Անդրադառնանք **դադարք** միավորին. ՆՀԲ-ում տրվում են հետևյալ իմաստները՝ *տեղի դադարելոյ յայսպեհովի, բնակարան, յարկ, տուն, տաղա-*

³⁵ Տե՛ս **Հր. Աճառյան**, ՀԱԲ, էջ 527:

³⁶ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 153:

³⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 210:

³⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 156:

³⁹ Տե՛ս **Ա. Աբաջյան, Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաշյան**, Հայոց լեզվի պատմություն, Եր., 2017, էջ 22:

ւար, որջ, բոյն, գոմք, փարախ են⁴⁰: Հիմքում **դադար** «հանգիստ, կանգառ, դարի տեղ, կացարան» բառն է, որը ծագում է ***dher-** «պահել» արմատից, որտեղից էլ *դարել* ձևը⁴¹: Կրկնավոր բառ է:

Անձաւ, քարանձաւ. ՆՀԲ-ում նշվում է՝ *անձաւ, որ և քարանձաւ. «Իսկ զընդդէմ արեգական կողմն անձալին... պէս պէս տաճարս և սենեակս օթից և տունս գանձուց և վիհս երկարս, ոչ գիտէ որ, թե որպիսեաց իրաց պատրաստութիւն հրաշակերտեաց»* (էջ 66): **Անձաւ** արմատը ծագել է հնդեվրոպական ***ang’hewa-** «նեղ տարածություն», ***ang’h** «նեղ, նեղացնել» ձևերից⁴²: **Քար** արմատը ևս բնիկ ծագման բառ է՝ հնդեվրոպական ***kar** «կարծր» արմատից:

Եղբայրանոց, օթանոց, հովանոց, աղքատանոց բառերի համար ընդհանուր է **-անոց** վեջածանցը, որը բնիկ է՝ կազմված **-ան** և **-ոց** մասնիկներից⁴³:

Ստ. Մալխասյանցի հայերենի բացատրական բառարանում **եղբայրանոց** բառի դիմաց գտնում ենք՝ *կրօնաւորների վանք*⁴⁴, այսինքն՝ հոգևոր եղբայրների բնակավայր նշանակությունը: **Եղբայր** բառը ծագում է հնիւ. ***brāter-** «եղբայր» արմատից⁴⁵:

Օթանոց նշանակում է *օթարան, օթևան, բնակարան*, որի **օթ** արմատը ծագել է հնիւ. ***evō, *ovō** «հագնիմ» բառից **-ti** ածականով: Հր. Աճառյանը մանրամասնում է. «*Այս երկուսը իրար հետ ճիշտ այն յարաբերութիւնն ունին, ինչ որ օթ «օթևան» և ագանիլ «իջևանիլ, գիշերել»*»⁴⁶: Նշենք, որ Էդ. Աղայանի բացատրական բառարանում *օթանոց* բառի փոխարեն գտնում ենք նույնիմաստ *օթարան* ձևը, որը Խորենացու պատմության մեջ վկայված չէ:

Հովանոց. ծագում է հնդեվրոպական ***pou-, *p(h)u-** «փչել, ուռչել» արմատից⁴⁷: Էդ. Աղայանի բառարանում մեզ հետաքրքրող իմաստը չենք գտնում: Ստ. Մալխասյանցի բառարանում երկրորդ իմաստով նշվում է *հով տեղ*, իսկ երրորդ իմաստով՝ *ամարանոց*⁴⁸: ՆՀԲ-ում բառն առանձին տրված է՝ *տեղի հովոց կամ զովանալոյ* բացատրությամբ: Բերենք նաև բնագրային օրինակ. «*Տրդատ զշինուած ամրոցին Գառնուոյ, զոր որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթազամ և կապարով մածուցեալ, յորում շինեալ և տուն հովանոց»* (էջ 294): Ինչպես տեսնում ենք, Խորենացին բառը կիրառում է հենց *ամառանոց* իմաստով:

Գոյություն ունեն հատուկ աղքատների խնամքի համար նախատեսված հաստատություններ, որոնք կոչվում էին աղքատանոցներ: **Աղքատանոց** բա-

⁴⁰ Տե՛ս ՆՀԲ, էջ 590:

⁴¹ Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 179:

⁴² Տե՛ս նույն տեղը, էջ 59:

⁴³ Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 798:

⁴⁴ Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Եր., 1944, էջ 557:

⁴⁵ Տե՛ս Հր. Աճառյան, ՀԱԲ, էջ 15:

⁴⁶ Նույն տեղում, էջ 609:

⁴⁷ Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., Եր., 2010, էջ 466:

⁴⁸ Տե՛ս Ստ. Մալխասյանց, նշվ. աշխ., էջ 132:

նի հիմքում **աղքատ** բառն է, որը Գ. Ջահուկյանը բխեցնում է ***(o)lika** նախաձևից՝ ***leig/k-** «պակասավոր, խեղճ» արմատից⁴⁹:

Իբրև ձմռանը ապրելու, մնալու տեղ՝ **ձմեռոց** բառը նա ներառված է մեր իմաստային դաշտում: Հիմքում **ձմեռն** բառն է, որը ծագում է հնդեվրոպական ***g^hheimerinos-** «ձմեռ» արմատից⁵⁰: Այն հականիշն է *ամարանդի*:

ՆՀԲ-ում **առագաստ** բառի դիմաց նշված է՝ *ներքին սենեակ հարսին և փեսայի, և Հարսնարանն զլիտվին*: Հիմքում **ազ** արմատն է, որը ծագում է բնիկ ***ow-** նախաձևից, (***ew** «հագնել»)՝⁵¹: **Առ-** և **-աստ** ածանցները նա բնիկ հնդեվրոպական են: Նշված բացատրության մեջ գեղեցիկ կազմություն է *հարսնարան* ածանցավոր բառը՝ որպես տան հատուկ սենյակ, *ննջարան, ընդունարան* ձևերի կաղապարով:

Երկում հանդիպել ենք նաև **մաւր/մօր** «ճահիճ, տիղմ, ճահճուտ» նշանակող բառին, որից ձևավորված ունենք *Մեծամօր* «ճահճոտ տեղ» հատուկ անունը: Ծագում է հնիս. ***meu-ru-**՝ ***meu-** «խոնավ, կեղտոտ» արմատից:

Նաւ. բխում է հնդեվրոպական ***nāu-** արմատից: Այս արմատով հանդիպում ենք նաև **նաւակառոյց** և **նաւահանգիստ** ձևերին: **Կառ** բառը կապվում է *կալ, կանգ* արմատների հետ, ծագում է հնդեվրոպական ***g^ha** «գալ, գնալ ծնվել, երևան գալ» նախաձևից⁵²:

Հանգ արմատի մեջ վերականգվում է **հան-** նախաձանցը՝ ***kuei** «հանգստանալ, հանգիստ վայելել» արմատի հետ: **-իստ** ածանցը բնիկ հնդեվրոպական է, ***-sti-** ածանցից ծագած՝ նախորդող ***-i-**ով: Գ. Ջահուկյանի նշմամբ՝ *հանգիստ* բառում **ի-**ն արմատական է⁵³:

Գիւղ. *բնակավայր, տուն* իմաստային դաշտի հիմնային, վաղնջական բառերից մեկն է: Հանդիպում է նաև *գեւղ* ձևով, որն ավելի մոտ է սկզբնաձևին: Ծագում է հնդեվրոպական ***ueik^h-li**՝ ***ueik^h-** «տուն, բնակատեղ, ավան» արմատից⁵⁴: Գոյություն ունի նաև այլ վարկած, որի համաձայն՝ վերջինս ունի կովկասյան՝ նախյան-դաղստանյան ծագում, սակայն մենք հիմնավոր ենք համարում Գ. Ջահուկյանի առաջ քաշած հնդեվրոպական ստուգաբանությունը: Երկում ունենք **գիւղն Աշտիշատ, գիւղն Օշական, գիւղն Թորդան** կապակցությունները՝ որպես բաղադրյալ տեղանուններ:

Կղզի. բոլոր կողմերից ջրով շրջապատված, մեկուսացած ցամաքի նշանակումն է: Ծագման վերաբերյալ կա երկու վարկած: Գ. Ջահուկյանի դիտարկմամբ՝ այն բնիկ հնդեվրոպական բառ է ***gēlg^h hiio**՝ ***gel-** «գնդ(վ)ել» արմատից՝ ***g^h-** աճականով⁵⁵: Հր. Աճառյանի ենթադրությամբ՝ ասորական հին փոխա-

⁴⁹ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 40:

⁵⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 476:

⁵¹ Տե՛ս նույն տեղը, էջ 72:

⁵² Տե՛ս նույն տեղը, էջ 372:

⁵³ Տե՛ս նույն տեղը, էջ 807:

⁵⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 163:

⁵⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 410:

ություն է: Վերջինս հանգում է այդ կարծիքին՝ հիմնվելով արաբական **jazira** և ասորական **gazartā** «կղզի» ձևերի վրա⁵⁶: Մենք նախապատվությունը տալիս ենք հնդեվրոպական վերականգնմանը:

Ցամաք. ծագման վերաբերյալ ևս տարակարծություններ կան: Ըստ Գ. Ջահուկյանի՝ բնիկ հնդեվրոպական է՝ ***ksāma- *ksā** «այրել» արմատից, հմմտ. հ. հնդկ. ***ksamā** - «չոր, ցամաք»⁵⁷: Հր. Աճառյանը փորձում է ընդհանրություն գտնել եբրայական **smq** «չորացնել» արմատի հետ:

Չոր. ծագում է հնդեվրոպական ***g'houero-** (***g'houoro-** > ձոր)՝ ***g'heu** «լցնել, թափել» արմատից⁵⁸: Պատմության մեջ հաճախադեպ են **Հայոց ձոր, Վայոց ձոր, Գարդմանայ ձոր** բաղադրյալ տեղանունները:

Միջոց. «...հաճի ի գաւառին Կարնոյ շինել զքաղաքն արգաւանդահող, շատաջուր և բերի, իբր **միջոց** վարկուցեալ զվայրսն, ոչ կարի բացեայ ի տեղեացն» (էջ 420): ՆՀԲ-ում **միջոց** բառի համար գտնում ենք *մէջն տեղեաց և իրաց, միջավայր, միջին տեղին կամ դիրքն, բացատ, բացօթեայ վայր, միջնաշխարհ, ի միջոցի երկրի* իմաստները⁵⁹: Բնիկ հայ բառ է հնիւ. **médynos** հիմքից⁶⁰:

Մենեակ. ծագման վերաբերյալ կան տարակարծություններ: Գ. Ջահուկյանի բացատրությամբ՝ այն կապ ունի հնդեվրոպական ***sk'i-** արմատի հետ, որը նշանակում է «թույլ փայլել, ստվեր»⁶¹: Համեմատում է հունարեն **σκηνή** «վրան, բեմ, սրահ», ռուսերեն **сень** «հովանի», **сенья** «սրահ, նախասենյակ» բառերի հետ: Հր. Աճառյանը չի հստակեցնում, պարզապես համեմատում է վրացերեն **սենակի** «փոքրիկ խուց, սենյակ», **մեսենակե** «ձգնավոր» բառերի հետ⁶²: Գրաբարում այն ունեցել է լայն իմաստ՝ շտեմարան, ներքին բնակարան, խուց, քնարան, կանանոց: Ակնհայտ է, որ Հր. Աճառյանը թեև Հ. Հյուբշմանի աշակերտն էր, սակայն առավել հակված էր բայերի ստուգաբանությունների դեպքում առավելությունը տալու փոխառյալ լինելու վարկածին, դրա համար գտնում էր համընկնումներ դրացի և հարևան ժողովուրդների բառապաշարում, իսկ Գ. Ջահուկյանը, հիմնվելով հնդեվրոպական բառապաշարի արդեն ամբողջական վերականգնումների փաստական հարուստ նյութի վրա, ստուգաբանելիս ուշադրությունը բնեռում է նախալեզվի հնչյունական և իմաստային համընկնումների վրա՝ շատ անգամ փոխառյալ համարված բառերի համար գտնելով դրանց բնիկ սկզբնաձևերը:

Գաւառի/ գօտի. Էդ. Աղայանի բառարանում գտնում ենք նշված բառի 17 իմաստ, որոնցից մեզ հատկապես հետաքրքրում են հինգերորդ և վեցերորդ իմաստները՝ 5. (*աշխար.*): *Երկրագնդի մակերևույթի՝ երկու միջօրեականների*

⁵⁶ Տե՛ս Հր. Աճառյան, ՀԱԲ, էջ 603:

⁵⁷ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 741:

⁵⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 477:

⁵⁹ Տե՛ս ՆՀԲ, էջ 280-281:

⁶⁰ Տե՛ս Հր. Աճառյան, ՀԱԲ, էջ 313:

⁶¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 676:

⁶² Տե՛ս Հր. Աճառյան, ՀԱԲ, էջ 201:

միջև պարփակված տարածությունը, 6.(աշխգր.): Որոշ տարածություն, շրջան՝ վայր, որ բնորոշվում է որևէ ընդհանուր կլիմայական հատկանիշով: Ծագում է հնդեվրոպական ***uābh-dē**՝ ***uebh** «հյուսել, գործել» (>հայ. տի) արմատներից⁶³: Կարող ենք արձանագրել, որ բառն արդի արևելահայերենում դարձել է տեղանիշ եզրույթ:

Ածու. նշանակում է բանջարանոցի կամ պարտեզի մի հատված, որտեղ աճեցնում են սերմերը, սակայն Խորենացու երկում կիրառվում է փոխաբերական իմաստով՝ փոքր երկիր՝ ժողովուրդ: Ծագում է հնդեվրոպական ***ag-**՝ «քշել, տանել, շարժել» արմատից՝ **-ու** հ.-ե. դերբայական ***-wes** ածանցի իգ. ***-usya** ձևից ծագող վերջածանցի միությամբ⁶⁴: Փաստենք, որ **ածու** բառի երկրանիշ կիրառությունն ՆՀԲ-ում տրված է բացառապես Խորենացու վկայակոչմամբ:

Բնիկ ծագման վերոհիշյալ բառերից արդի արևելահայերենին *ն*-ի անկմամբ փոխանցվել են **դուռն**, **կողմն**, **աջակողմն**, **ձախակողմն**, **հարաւակողմն**, **լեառն**, **լեռնակողմն** բառերը, *խ*-ի անկմամբ՝ **հիւսիսի** և **տեղի** բառերը: *Լեառն* բառի դեպքում առկա է *եա* երկբարբառի պարզեցում ևս՝ եա>ե: **Ամուրն** ձևը լեզվի արդի փուլում չի ընկալվում իբրև գոյական (*ամրոց*), դարձել է գոտ ածական՝ *պինդ, ամուր, կարծր, ուժեղ* իմաստով: **Միջոց** բառը պահպանվել է իմաստային տեղաշարժով՝ արդի արևելահայերենում կորցնելով *տեղ*, *վայր* նշանակությունը, դուրս գալով մեր քննած հասկացության շրջանակներից: **Զմերոց** բառի փոխարեն արդի փուլում կիրառվում է **ձմեռանոց** ձևը, **օթանոցի** փոխարեն՝ **օթարան** կամ **օթևան**, իսկ **հովանոց** գոյականը կորցրել է *հով տեղ* իմաստը: Միակ բառը, որը կիրառությունից դուրս է մղվել, **դադարք**-ն է: Մնացյալ բառերի դեպքում իմաստային նկատելի փոփոխություն-տեղաշարժեր չեն կատարվել:

Ամփոփելով Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկի բնիկ ծագում ունեցող *բնակավայր, տուն* հասկացության բառային նշանակումների ծագումնաբանական և իմաստաբանական քննությունը՝ կարող ենք արձանագրել.

ա) *բնակավայր* հասկացության բառերի մեծ մասը բնիկ է և բնորոշ գրական հայոց լեզվի զարգացման բոլոր շրջափուլերին,

բ) առանձնացված միավորների կազմում ունենք և՛ պարզ, և՛ ածանցավոր, և՛ բարդ կամ բարդ ածանցավոր բառեր՝ 24 պարզ, 16 ածանցավոր, 7 բարդ և 8 բարդաձանցավոր բառ,

գ) *բնակավայր* հասկացության կազմում վկայված են բազմաթիվ հարադիր կազմություններ, որոնք ունեն ինչպես հասարակ, այնպես էլ հատուկ անունների գործառնություն՝ նշանակում են երկրանուններ, լեռնանուններ, գյուղանուններ, ջրանուններ,

դ) բառերի հիմնական մասը պատմական զարգացման ընթացքում իր բովանդակային պլանը պահպանել է՝ որպես «տուն, բնակավայր» հասկացության

⁶³ Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 153:

⁶⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 26 և 810:

լեզվական նշանակում, գաղափարական խորհրդանիշեր. եզակի բառեր են արդի փուլում վերածվել պատմաբանների, հնաբանությունների, այսինքն՝ գրաբարաբանությունների՝ *դադարք, լեռոն, ծովեզերայք, ձմերոց*, մօր, *օթանոց*: Վկայված են իմաստի նեղացման օրինակներ կամ լիակատար իմաստափոխություններ՝ *սառուր, դուռն, հովանոց, միջոց, դադար*,

ե) «տուն, բնակավայր» հասկացության բառային նշանակումները գրաբարում առավել հաճախ էին կազմում հատուկ բաղադրյալ տեղանիշ անուններ, որոնք շարահյուսական մակարդակում հատկացուցիչ-հատկացյալ կապակցություններ էին, ինչպես օրինակ՝ **երկիր Արարադայ, երկիր Աւետեաց, երկիր Խուժաստանի, երկիր Հայոց, երկիր Յունաց, երկիր Պարսից, գաւառն Բասենոյ, գաւառն Գողթան, գաւառն Դարանադեաց, գաւառն Եկեղեաց, գաւառն Միւնեաց, գաւառն Տաշրաց, Եզր հայկական** ևն, արդի արևելահայերենում տեղանունների կազմության այս սկզբունքը դարձել է հնաբան: Լեզվի զարգացման ներկա շրջանում համագործածական են տեղանիշ ձևերի կարճ տարբերակները՝ առանց տեղ նշանակող հասարակ անունների՝ **Հայաստան, Հունաստան, Պարսկաստան, Բասեն, Սյունիք, Տաշիր, Գողթն** ևն,

զ) էթե նշյալ հասկացության բառային միավորների բովանդակային պլանը հիմնականում կայուն է մնացել՝ իմաստների որոշ նեղացմամբ կամ բառերի եզրությացմամբ, ապա արտահայտության պլանը ենթարկվել է պատմական հնչյունափոխությունների՝ երկհնչյունների պարզեցում, հնչյունների անկում, դրափոխություն, և զուգահեռաբար կրել է արեղյանական ուղղագրական կանոններից բխող փոփոխություններ:

НАРИНЕ ДИЛБАРЯН – Индоевропейские словесные обозначения концепта «поселение, дом» в книге Мовсеса Хоренаци «История Армении». – Лингвистическая концептология – современная самостоятельная дисциплина, изучающая особенности содержания двуплановых языковых единиц, в частности, слов, причем указанные планы выражения и содержания могут иметь очень широкое понимание, то есть слово может рассматриваться и как идеологический символ, и как универсальный объектный код, и как лексико-грамматическое поле. Словесные обозначения понятий в каждом языке выражают национально-культурные особенности мышления и мировоззрения сообщества, говорящего на данном языке, которые могут претерпевать в разное время отдельные изменения, но характеризуются определенной устойчивостью. В данной статье мы рассмотрели различные лингвистические значения понятия «поселение, дом» в известном труде V века «История Армении» Мовсеса Хоренаци, выделив индоевропейские единицы данного концепта, диахронически исследуя их семантическое содержание от древнеармянского языка до современного восточноармянского. В книге «История Армении» мы выявили около 55 слов коренного, индоевропейского происхождения, которые так или иначе выражают представления о понятии «поселение, дом» в древнеармянском языке, выявили их семантические и словообразовательные характеристики, фонетические особенности, исторические изменения в современном армянском языке. Лексические единицы изученного нами концепта относятся к основной лексике, имеют высокую частоту употребления. Были исследованы как нарицательные, так и собственные имена, фразеологические единицы.

Ключевые слова: концепт «поселение, дом», исконные слова, Мовсес Хоренаци, «История Армении», классический древнеармянский язык, современный восточноармянский язык, семантические сдвиги, словообразование.

NARINE DILBARYAN – Indo-European Verbal Designations of the Concept “house, settlement” in the book of Movses Khorenatsi “History of Armenia”. – Linguistic conceptology is a modern independent discipline that studies the features of the content of two-dimensional linguistic units, in particular, words, and the specified plans of expression and content can have a very broad understanding; that is, a word can be considered both as an ideological symbol, and as a universal object code, and as a lexical and grammatical field. Verbal designations of concepts in each language express the national and cultural features of thinking and worldview of the community speaking this language, which can undergo individual changes at different times, but are characterized by a certain stability. In this article, we examined various linguistic meanings of the concept of “settlement, house” in the famous work of the 5th century “History of Armenia” by Movses Khorenatsi, highlighting the Indo-European units of this concept, diachronically studying their semantic content from Ancient Armenian to Modern Eastern Armenian. In the book “History of Armenia” we identified about 55 words of indigenous, Indo-European origin, which in one way or another express ideas about the concept of “settlement, house” in the Ancient Armenian language, identified their semantic and word-formation characteristics, phonetic features, historical changes in the modern Armenian language. The lexical units of the concept we studied relate to the basic vocabulary, have a high frequency of use. Both common and proper names, phraseological units were studied.

Key words: concept of “settlement, house”, native words, Movses Khorenatsi, "History of Armenians", Classical ancient Armenian, Modern Eastern Armenian, semantic shifts, word formation.

Գրականության ցանկ

- Աբաջյան Ա., Դիլբարյան Ն., Յուզբաշյան Ա. Հայոց լեզվի պատմություն, Եր., 2017
 Աղայան Էդ. Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 1384: Հայր Գաբրիել Աւետիքեան, Հայր Խաչատուր Միրմելեան, Հայր Մկրտիչ Աւգերեան // Նոր բառգիրք հիայկագեան լեզուի, Եր., 1979
 Աղայան Էդ. Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Եր., 1974
 Աճառյան Հր. Հայերեն արմատական բառարան, Եր., 1926
 Աճառյան Հր. Հայոց անձնանունների բառարան, Եր., 1942
 Խորենացի Մովսես Հայոց պատմություն, Ուսանողի գրադարան, Եր., 1981
 Մալխասեանց Ստ. Հայերեն բացատրական բառարան, Եր., 1944
 Ջահուկյան Գ. Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010
 Воркачев С. Г. Концепт как «зонтиковый термин» // Язык, сознание, коммуникация. Вып. 24. - М., 2003. - С. 5–12
 Семинар «Проблемы лингвоконцептологии» (xn--b1abhjmcpcdhbn0bzc.xn--p1ai)